

կական հոսանքների պայքարից կտրված: Գեոևս շարունակվում է խոսվել XVII դ. վերջին տասնամյակում և XVIII դ. սկզբներին Մարսելյի, Լիվոնոյի տպարանների և Ամստերդամում վանդեյնիների տպարանից բացի մի այլ անհայտ տպարանի մասին:

Հիմնվելով 1660—1720 թթ. ընթացքում Ամստերդամում, Լիվոնոյում, Մարսելյում և Կ. Պոլսում լույս տեսած գրքերի հիշատակարանների, տառատեսակների, պատկերների և կողմնակի այլ փաստերի վրա, ներկա հոդվածում փորձել ենք հնարավորին շափ հանդամանորեն խոսել Կ. Պոլսի հայ կաթողիկոսների տպարանի հիմնադրման, հրատարակիչների, նրանց հրատարակած գրքերի և առնչվող այլ հարցերի մասին:



Կ. Պոլսի հայ կաթողիկոսների տպարանը գոյություն է ունեցել բաւորը դարից ավելի և այնպեղ տպագրվել է մոտ հիսուն անուն գիրք: Դրանցից մի մասը արտոդոսաթերթերում իբրև հրատարակություն վայր ցույց են տրված Լիվոնոն, Մարսելյը, Ամստերդամը, մի մասի վրա էլ՝ տպագրության իսկական վայրը՝ Կ. Պոլսը: Կան այդ տպարանի մի քանի հրատարակություններ էլ, որոնց վրա որևէ բաղաբ չի նշված: Կ. Պոլսի տպագրություն ցույց տրված գրքերից մի քանիսում նշվում է նաև՝ «Ի թաղն Պէկօղլի» և տպագրող-հրատարակիչների անունները, բայց Երբեք հստակությունը չի ասվում, թե ում է պատկանում տպարանը: Իբրև կանոն այդ գրքերը կամ բոլորովին չունեն կամ ունեն շատ կցկատուր հիշատակարաններ: Հաճախ մասվածապատ են նույնիսկ արտոդոսաթերթերը, երբեմն բերվում են միայն հիշատակվող անունների սկզբնատառերը կամ դրանք փոխարինվում են «ումեմն» գերանունով: Ամեն քանից երևում է, որ հրատարակիչները աշխատել են թաքցնել հրատարակության հանդամանքները: Սակայն շատ իրողություններ, որոնք ժամանակակիցների համար անհասկանալի ու մութ են եղել, այժմ տեսանելի են, որովհետև հնարավորություն ունենք պատմական զեպրեն ու իրողությունները գիտելու բոլոր կողմերից, միմյանց հետ համադրելով: Այսպես, միևնույն տարում տպագրված՝ Երեմիա Մեղրեցու «Բասգիրը Հայոցի» և «Գիրք աշխարհաց և սոսապկարանութեանցի» վրա տպագրության տարեթիվն ու ամսաթիվը բերված են հետևյալ ձևով.

«Եւ թվականութեանս Հայոց, ՌՃԽԷ. լունիս. Ժ.
և ի թվին փրկչին. 1698 լունիսի. Ժ»:

Այս երկու տողերը, ինչպես և ամբողջ արտոդոսաթերթի տառերը, շարվածքը, ձևավորումը այնքան նման են միմյանց, որ կասկած չեն թողնում դրանց նույն վայրում և տպարանում շարված լինելու մասին: Սակայն «Բասգիրի» վրա իբրև տպագրության վայր նշված է Լիվոնոն («Ի յԱլիկոնայ բաղաբի»), իսկ «Գիրք աշխարհացի» վրա բաղաբի անունը բաց է թողնված: Կ. Պոլսում տպագրված գիրքը մի այլ բաղաբի հրատարակություն համարելու կեղծիքը շատ ավելի ակնատու է 1708 թ. իբրև թե Մարսելյում տպագրված «Տօմարից»: Այդ գրքի արտոդոսաթերթում նշված է. «Ի Մարշիլիայ բաղաբի»: Իսկ հիշատակարանում ասված է. «Աւարտեցաւ գրքուլկս որ կոչի Յովատափի, ի թվին Քրիստոսի ՌէՃԹ և հայոց ՌՃՄԸ, ի մայրաքաղաքն Ըստամպուլ, ի թաղն Պէկօղլի կոչեցեալ»:

Խաշատուր Էրզրումեցու 1696-ին լույս տեսած «Գիրք բերականութեան» վերջում գետեղված «Վկայութեան» մեջ Հովհաննես Կաֆայեցին գրում է. «Ուստի վկայութեամբ հաստատեմ զվերոյ գրեցեալս, և մատանեալ իմով կերեմ: Դժաղբեցի զսա. Յամի տեսուն մերոյ՝ ՌՈՂԵ, և բոստ մերոյ համարողութեանն ՌՃԽԷ, յօգոստոսի ԺԵ: Կոստանդինուպոլսի: Նաև՝ սրբագրութեամբ՝ Յօհաննու վարդապետի Կաֆայեցոյ»:

«Վկայութեան» Կ. Պոլսում գրված լինելը ևս ապացույց է, որ գիրքը տպագրվել է հենց Կ. Պոլսում: Հայտնի է, որ հիշյալ ժամանակներում Լիվոնոյն չույրը զավանական և բաղաբական բոլոր հարցերում հստակական եկեղեցու խստագույն հսկողության տակ էին: Առանց վեր-

5 Այստեղ և հետագայում ուղղագրությունը պահպանել ենք այնպես, ինչպես բնագրերում է:

6 Այս ստեղծված արժեքավոր փաստաթղթեր կան 1891 թ. Վենետիկում լույս տեսած Մ. Ուդուրլյանի «Պատմութիւն Հայոց գաղթականութեան և շինութեան եկեղեցւոյ նոցայ ի Լիվոնոյ բաղաբի» աշխատության մեջ: Հիշյալ ժամանակներում Լիվոնոյում հայկական տպարան չի եղելու մասին է խոսում նաև սույն աշխատության էջ 63-ի հետևյալ ծանոթությունը. «Մենք ոչ սակա հետազոտութիւն ըրած ենք ի Լիւոնոյ, որպես նաև Էմիլ Գեղա անուն հայագէտ Խոսալացիին Հայկական տպարանին հետքն և անոր վերաբերեալ լիշատակութիւնն գտնել, Լեւոնտու ունելով մեզ կապրօնեան դրատան վերակացուն, այլ իզուր եղաւ մեր աշխատութիւնն և շքտաւ ինչ ժամանակին հեռաորութեան համար»: